ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Անդրանիկի 13, էլ. հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվար 2018 թվականի N 35

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՍՏՂԻԿ>> Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<գ>> պարբերության , 26-րդ կետի 1-ի ենթակետով և հիմք ընդունելով Պռոշյան համայնքի <<Աստղիկ>> մ/մանկապարտեզի սննդամթերքի ձեռք բերման համար ապրանքների ձեռք բերման գնման պատասխանատու ստորաբաժանման կողմից ներկայացված գնման հայտը:

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Ստեղծել ՊՀՄՍ–ԳՀԱՊՁԲ 18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (ԳՀ) գնահատող հանձնաժողով հետևյալ կազմով՝
   Հանձնաժողովի նախագահ
   Արա Արեյան համայնքի ղեկավարի տեղակալ
   Հանձնաժողովի անդամներ
   Յուրիկ Ոզգոյան Պռոշյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ
   Անդրանիկ Պետրոսյան Պռոշյանի համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ
   ՊՀՄՍ–ԳՀԱՊՁԲ 18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (ԳՀ) գնահատող հանձնաժողով քարտուղար նշանակել աշխատակազմի գլխավոր մասնագետ ՎռամԳրիգորյանին:
2. ՊՀՄՍ–ԳՀԱՊՁԲ 18/01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի (ԳՀ) գնահատող հանձնաժողովի առաջին նիստը հրավիրել 2018թ փետրվարի 16-ին ժամը $11^{00}$, համայնքապետարանի շենքում գ. Պռոշյան Անդրանիկի փ 13 հասցեում:
3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ հանձնաժողովի գործունեությունը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Անդրանիկի փ 13, Էլ. հասցե՝ proshyan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 փետրվարի 2018 թվականի N 34

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ <<ԱՍՏՂԻԿ>> Մ/ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ՁԵՌՔ ԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N526-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 7-րդ կետի 1-ին ենթակետի <<ա>> և <<բ>> պարբերությունների և 20-րդ կետի պահանջներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Պռոշյան համայնքի <<Աստղիկ>> մ/մանկապարտեզի 2018թ սննդամթերքի ձեռք բերման համար աշխատանքների ԳՀ գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանում համարել <<Աստղիկ>> մ/մանկապարտեզի տնօրեն Մարիաննա Աղայանին, իսկ գնումները համակարգող աշխատակազմի գլխավոր մասնագետ՝ ՎռամԳրիգորյանին:

2. Պատասխանատու ստորաբաժանմանը և գնումները համակարգողին՝ գնման գործընթացը կազմակերպել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
# ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Անդրանիկի 13

## ՈՐՈՇՈՒՄ

16 փետրվարի 2018թ. թիվ 33

## ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Վահե Սահակյանին սեփականության իրավունքով պատկանող կադաստրային ծածկագիր /07-053-0081-0030/ 0.1149 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասի բաժանումից առաջացած հողամասերը հասեավորել հետևյալ կերպ՝ 0.0649 հա հողամասը թողնել նույն հասցեով Խանջյան փողոց 1-ին նրբանցք թիվ 1/1-8, իսկ բաժանված հողամասին տալ հետևյալ հասցե Խանջյան փողոց 1-ին նրբանցք թիվ 1/1-9 :
2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:
3.Համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Կ.Ադամյանին սույն որոշումը բերել ի գիտություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Պռոշյան համայնք, Անդրանիկի փ.11

# ՈՐՈՇՈՒՄ

*<<12>>-ը փետրվարի 2018թ թիվ* 32

## ՏԱԹԵՎԻԿ ԳԵՂԱՄԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով << Հայրենանվեր Մահապարտներ>>հայրենանիրական հասարակական կազմակերպության նախագահ Կ.Գիլոյանի 2018թ հունվարի 30-ի թիվ 2/117 գրությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Փոխանցել ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքի ուսանողի ուսման վարձը

| հ/հ | Անուն, հայրանուն, ազգանուն, | Գումարի չափը դրամ |
|---|---|---|
| 1 | Տաթևիկ Գեղամի Հայրապետյան | 50. 000 դրամ |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 50.000 դրամ |

Համայնքի ղեկավար՝ Ա. Մուրադյան

ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ 03301124

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի

Պռոշյան համայնք, Անդրանիկի փ.11

# ՈՐՈՇՈՒՄ

*<<12>>-ը փետրվարի 2018թ թիվ* 37

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՎԵԼ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԸ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով դրամական օգնություն տրամադրելու նպատակով ներկայացված դիմումները և հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի պահանջները, համայնքի ավագանու 2017թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 32 որոշումն ու Պռոշյան համայնքի աշխատանքի և սոցիալական ծառայության հարցեր քննող հանձնաժողովի եզրակացությունը

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Փոխանցել ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքների ուսանողների ուսման վարձը

| հ/հ | Անուն, հայրանուն, ազգանուն, | Գումարի չափը դրամ |
|---|---|---|
| 1 | Անի Գագիկի Գալստյան | 60. 000 դրամ |
| 2 | Դվինա Գոռի Արեյան | 40.000 դրամ |
| 3 | Ռուբինա Գոռի Արեյան | 40.000 դրամ |
| 4 | Գագիկ Սամսոնի Տոնոյան | 40.000 դրամ |
| 5 | Մերի Գալուստի Պողոսյան | 40.000 դրամ |
| 6 | Տիգրան Արմենի Սարգսյան | 40.000 դրամ |
| 7 | Դավիթ Սայաթի Աբրահամյան | 40.000 դրամ |
| 8 | Արմինե Կարապետի Պետրոսյան | 40.000 դրամ |
| | | |
| | | |
| | | |
| ԸՆԴԱՄԵՆԸ | | 340.000 դրամ |

Համայնքի ղեկավար` Ա. Մուրադյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
# ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

## ՈՐՈՇՈՒՄ

12. փետրվարի 2018թ թիվ 30

### ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՎԵԼ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով դրամական օգնություն տրամադրելու նպատակով ներկայացված դիմումները և հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները, Պռոշյան համայնքի ավագանու 2017թվականի սեպտեմբերի 13-ի թիվ 32 որոշումն ու աշխատանքի և սոցիալական ծառայության վերաբերյալ հարցեր քննող հանձնաժողովի եզրակացությունը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ներքոհիշյալ սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն

| | Անուն Ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1 | Վահրամ Սարգսյան | 20.000 դրամ |
| 2 | Արթուր Բաղդասարյան | 80.000 դրամ |
| 3 | Արթուր Գրիգորյան | 80.000 դրամ |
| 4 | Մարիամ Պետրոսյան | 20.000 դրամ |
| 5 | Սամվել Բեժանով | 40.000 դրամ |
| 6 | Բուրաստան Զաքարյան | 50.000 դրամ |
| 7 | Համբարձում Մուրադյան | 40.000 դրամ |
| | | |
| | | |
| | | |
| | ընդամենը | 330.000 դրամ |

Համայնքի ղեկավար Ա. Մուրադյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

# ՈՐՈՇՈՒՄ

12. փետրվարի 2017թ թիվ 29

## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆՐԱՆՑ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2017թ սեպտեմբերի 13-ի թիվ 32 որոշումը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Ներքոհիշյալ հանգուցյալների ընտանիքներին տրամադրել դրամական օգնություն

| | Անուն Ազգանուն | Գումարի չափ |
|---|---|---|
| 1 | Հայկուշ Աբրահամյան | 50.000 դրամ |
| 2 | Զուլիետա Հարությունյան | 50.000 դրամ |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | ընդամենը | 100.000 դրամ |

Համայնքի ղեկավար Ա.Մուրադյան

ՊՌՈՇՅԱՆ ... 03301124

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
ՀՀ Կոտայքի մարզ, գ.Պռոշյան, Անդրանիկի 13

# ՈՐՈՇՈՒՄ

12 հունիսի 2018թ. թիվ 28

## ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. մայիսի 18-ի N912-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ պարբերության 9, 10, 11 13,22.1-րդ կետերով ու հաշվի առնելով այն հանգամանքը,որ ինքնակամ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ,որ չի հակասում քաղաքաշինական նորմերին և չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում և հաշվի առնելով Անդրանիկ Հարությունյանի դիմումը .

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Բավարարել Անդրանիկ Հարությունյանի խնդրանքը և նրան պատկանող Պռոշյան համայնքի Գ.Չաուշի խճուղի թիվ 1/75 հասցեում գտնվող կադաստրային ծածկագիր <07-053- 0387-0026-ից > 0.0355 հա /0.01074 հա այլ հողատեսք, 0.02476 հա վարելահող / հողամասի վրա ինքնակամ կառուցված /արտաքին մակերեսով / 452.19 քմ բնակելի տան, 11.35 քմ ավտոմեքենայի տնակի ,28.2 քմ ծածկի , 4.34 քմ մառանի և 5.35 պարիսպի նկատմամբ ճանաչել սեփականության իրավունքը :

2.<< Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին>> Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 13 կետի /ա/ և /բ/ ենթակետերի պահանջներով բնակելի տան յուրաքանչյուր քառակուսի մետրի համար 452.19քմ x2600 դրամ = 1175694.0 ՀՀ դրամ, իսկ /ավտոմեքենայի տնակի, ծածկի,մառանի և պարիսպի / համար 49.23 x1560 դրամ = 76798.8 ՀՀ դրամ որը պետք է մուծվի Պռոշյան համայնքի /900115107063/ հաշվեհամարին 60 օրյա ժամկետում:

3.Չվճարման դեպքում որոշումը կհամարվի ուժը կորցրած:

4.Կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ Ս.Ադամյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
## ՊՌՈՇՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Պռոշյան համայնք
Էլ. հասցե` proshyan.kotayq@mta.gov.am, proshyan2413@rambler.ru

# ՈՐՈՇՈՒՄ

12 Ապրիլի 2018 թվականի N 27

## ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքաշինության մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ կետով,Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության **2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387 որոշման պահանջներով** և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 27-ի N85 դրական եզրակացությունը և **համայնքի** ավագանու 2016 թվականի նոյեմբերի 22-ի թիվ 42-Ն որոշումը և հիմք ընդունելով քաղաքացու կողմից ներկայացված **կադաստրային** արժեքի մուծման անդորրագիրը /1574048.1/ ՀՀ դրամ.որոշում եմ

1. ՀՀ Կոտայքի մարզի Պռոշյան համայնքի գլխավոր հատակագծում կատարել հետևյալ փոփոխությունը.
Անդրանիկ Խաչատուրի Հարությունյանի սեփականություն հանդիսացող կադաստրային ծածկագիր /07-053-0387-0026 / 0.07202 հա, գյուղատնտեսական նշանակության վարելահող, այլ հողատեսք հողամասից, համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի հիման վրա 0.0355 հա /0.01074հա այլ հողատեսք, 0.02476 հա վարելահող/ հողամասի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի գործառնական նշանակության՝ բնակելի կառուցապատման :

**2.Վեր նշված հողամասին տալ հետևյալ հասցե` Կոտայքի մարզ Պռոշյան համայնք Գ.Չաուշի խճուղի թիվ 1/75**

**3: Որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:**

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԹՈՒՐ ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՊՌՈՇՅԱՆ 03301124